Հենզել Մանուչարյան

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ

Բանալի բառեր- էթնիկական ընդհանրություն, պատմական հայրենիք, հոգեկան կերտվածք, տնտեսական կյանք, սոցիալական կառուցվածք, քաղաքական համակարգ, գաղափարախոսություն, Արարատիզմ, Արարատականություն:

Ազգը ագրարային հարաբերություններից արդյունաբերականին անցման պատմաշրջանում ձևավորված մարդկային ամենակայուն ու համապարփակ ընդհանրությունն է:

Ազգերը միմյանցից տարբերվում են առաջին հերթին իրենց *էթնիկական* (արյունակցական) ընդհանրությամբ, երկրորդ՝ իրենց *պատմական հայրենիքով*, երրորդ՝ *լեզվով*, չորրորդ՝ *հոգեկան կերտվածքի* ընդհանրությամբ:

Այս չորս հատկանիշները բնութագրում ենք որպես *էթնոտարբերիչ հատկանիշներ*:

Իսկ նախազգային հանրույթներից՝ տոհմից, ցեղից, ազգույթից (ժողովուրդ) ձևավորված ազգերը տարբերվում են *իրենց տնտեսական կյանքի, սոցիալական կառուցվածքի, քաղաքական համակարգի և գաղափարախոսության* առանձնահատկություններով[1]: Նշված հանրույթներում ապրող բոլոր էթնիկ ընդհանրությունները ունեցել են գրեթե նույնանման տնտեսակարգ, սոցիալական կառուցվածք, ինքնակառավարման համակարգ և նաև նույնանման հավատք, աշխարհընկալում և հետևաբար նաև՝ նույնանման գաղափարախոսություն: Նրանց բոլորի հիմքում ընկած են *յուրաքանչյուրի ցեղի ու հայրենիքի սրբագործման և էթնիկական-ազգային ինքնության* (ինքնաճանաչման) գաղափարները: Այսուհանդերձ, ազգերի կենսակերպերի տարբերությունները առաջ են բերել նաև ազգային գաղափարախոսությունների բազմազանություն: Յուրաքանչյուր ազգի գաղափարախոսությունում շեշտվել են տվյալ ազգի առջև որոշակի դարաշրջաններում ու տարածաշրջաններում ծառացած կոնկրետ խնդիրներ:

Ինչպես ազգն է պատմական երկարատև զարգացման բարդ գործընթացի արդյունք, այնպես էլ ազգային գաղափարախոսությունը հանդիսանում է այդ նույն գործընթացի հետևանք: Այն տոհմացեղային գաղափարաբանությունից վեր բարձրացավ, անցավ ազգույթի ֆիլտրով, բյուրեղացավ ու համազգային ճանաչում ստացած ամբողջական ուսմունք դարձավ արդյունաբերական հասարակարգին անցման փուլում և գաղափարապես նախապատրաստեց մարդկային հանրույթներից բարձրագույնի՝ ազգերի ձևավորումը:

Ազգային գաղափարախոսությունը տեսական համակարգերի և հայացքների ավարտուն ամբողջություն է: Այն ազգի գործունեության հոգևոր և մտավոր հիմքն է: Նրա նպատակն է առաջադրել ազգի առջև ծառացած կենսական հրատապ խնդիրների լուծման գաղափարներ, արմատավորել դրանք մարդկանց գիտակցության մեջ և կազմակերպել դրանց իրականացման իրատեսական գործընթացը: Այն հանդես է եկել նախ որպես աշխարհընմբռնում, զգացմունք, հավատք, ապա՝ ուսմունք, աշխարհայացք, որոնց շրջանակներում տրվել է ազգային արժեքների բացարձակ գիտակցությունը այլ արժեքների շարքում: Ազգային գաղափարախոսությունն այնպիսի մտածելակերպ է, փայփայված իդեա, որը մարդու ուղեղը և սիրտը լցնում է կենսունակ մտքերով ու զգացումներով, դրդում նրան կազմակերպված ու համակարգված գործողությունների[2] և իրոք դառնում է հզոր նյութական ուժ, երբ տիրապետում է ազգի հիմնական զանգվածին:

Ազգի գաղափարախոսության կարևոր հիմնադրույթներից առաջինը թերևս ցեղի (էթնիկական), ծագման ընդհանրության գիտակցումն է, որը արտահայտվում է մարդկ-

[1] Տե՛ս Մանուչարյան Հ., Սոցիալիստական հայ ազգի էթնոտարբերիչ հատկանիշները, Ե., 1988, էջ 11:
[2] Տե՛ս Hans Kohn, The idea of nationalism, Macmillan: New Work, 1945, pp. 18-20:

անց որոշակի էթնոսին պատկանելու համոզմունքով: Մեկ ընդհանուր նախահորից ծագած լինելու լեգենդներն ու առասպելները առկա են բոլոր հին ժողովուրդների ֆոլկլորում: Ցեղային ընդհանրության գաղափարը ավելի գիտականորեն հիմնավորվում է մարդաբանական տիպի միատեսակության մեջ[1]:

Տոհմացեղային հանրույթի ձևավորման առաջին պայմանը նստակյաց կյանքով մշտական բնակավայրում համատեղ ապրելուն անցնելն էր, որը շրջադարձային այն պահն էր, երբ թափառական հոտերի ժամանակավոր կայանատեղից *տարածքը* դառնում է կազմավորվող տոհմացեղային հանրույթի *հայրենիքը՝* նվիրական այն վայրը, որտեղ հաստատվելով՝ մարդկային որոշակի խումբը ստեղծում է իր նյութական ու հոգևոր մշակութային արժեքների համակարգը և այն ճանաչում իր հայրենիքն ու իր իսկ ստեղծած լեգենդներում ոգի առած դյուցազնածին բնաշխարհը: Ցեղի ու հայրենիքի գաղափարը սրբագործվելով, առասպելների ու լեգենդների տեսքով, մտնում է ազգի գենի ու գոյի գիտակցության մեջ և նրա համար դառնում *ինքնության-ինքնաճանաչման համակարգ*: Ցեղային ինքնությունը ենթադրում է էթնիկական մտածողության ինքնատիպություն, էթնիկ արժեքների ինքնաճանաչում: Նրա բովանդակությունը ազգային կեցության, ազգային անցյալի, անհատի ազգային ըմբռնումների ամբողջությունն է:

Ազգային ինքնությունը Բ. Բյուզանի բնորոշմամբ այն է, որի հիման վրա մարդկանց խումբը իրեն վկայակոչում է որպես ամբողջություն, այսինքն՝ որպես «մենք», հասարակության ցանկությունը և կարողությունը պահպանելու լեզվի, մշակույթի միասնականության, կրոնի և ազգային սովորույթների ավանդական նմուշները[2]:

Անցյալի իմաստավորումը խոր արմատներ ունի: Պատմական հիշողությունը ընդունում և պահպանում է իր մեջ միայն այն, ինչի համար ազգային ինքնագիտակցությունը իր վրա պատասխանատվություն է վերցնում: *Ազգային ինքնությունը տվյալ ազգի հազարամյակներով կուտակված էթնիկ ոգու ինքնաճանաչումն է:*

Այժմ թռուցիկ անդրադարձով տեսնենք թե իրենց ցեղի, հայրենիքի և ինքնության հատկանիշները ինչպես են գաղափարայնացրել հանրահայտ գաղափարախոսություն ունեցող ազգերը.

- Պանսլավոնիզմի (համասլավոնականություն) հիմքում դրվել են ժողովուրդների պատմամշակութային տարատեսակների ըմբռնումը, ըստ որի սլավոնական ժողովուրդները տարբերվում են եվրոպական ժողովուրդներից և պարտավոր են համախմբվել ու պահպանել իրենց տեսակը:
- Պանգերմանիզմի (համագերմանականություն) հիմքում դրվել է գերմանալեզու ժողովուրդների ցեղային ընդհանրության գաղափարը, նրա նպատակն է միավորել գերմանալեզու ժողովուրդներին և հաստատել գերմանական համաեվրոպական գերիշխանություն:
- Պանթուրքիզմը /համաթուրքականություն/ քարոզում էր, որ Ադրիատիկի ափերից մինչև Չինաստան ընկած թուրքալեզու ժողովուրդները եղբայրներ են:
- Սիոնիզմն էլ հռչակում է, որ աշխարհի բոլոր հրեաները միասնական ազգի անդամներ են, նրանց նպատակն է Պաղեստինում ստեղծել ազգային պետություն և աշխարհասփյուռ հրեաներին հավաքել պատմական հայրենիքում՝ սուրբ Սիոն լեռան ստորոտում:

Փոքր ու վտանգված ազգերից շատերի, այդ թվում և հայերի ազգային գաղափարախոսությունները հայտնի են նացիոնալիզմ անունով: Հիմնահարցի մասնագետները գտնում են, որ նացիոնալիզմը /ազգայանականություն/ ամենատարածված գաղափարախոսությունն է աշխարհում[3]: Այն ունի բազմաթիվ դրսևորումներ ու տարատեսակներ: Այսուհանդերձ, դրանց բոլորի հիմքում էլ դարձյալ դրված են ցեղի, հարենիքի և նրանց ինքնաճանաչման-ինքնության գաղափարը: Օրինակ լիբերալ նա-

---

[1] Տե՛ս Մանուչարյան Հ., նշվ. աշխ., էջ 12:
[2] Տե՛ս «Միջազգային հարաբերությունների արդի տեսություն», Ե., 2001, էջ 215:
[3] Տե՛ս Hagopian M., The phenomen of Revolution, New-work, 1975, p. 287.

ցիոնալիզմը ազգը դիտում է որպես եղբայրական ընդհանրություն: Ավանդական նացիոնալիզմը ձգտում է ազգին համախմբել անցյալի փառահեղ իրողությունների ներքո: Մեսիական նացիոնալիզմը առաջացնում է այն զգացումը, որ տվյալ ազգի անդամները հավատում են իրենց ազգի արարչական ծագմանը[1]:

Ազգային գաղափարախոսությունը նպատակամղել է ինչպես հզոր ազգերին, բարձրացնելով նրանց հուզող այն հիմնահարցերը, որոնք կապված են եղել ինքնահամախմբվելու, այլ ժողովուրդներին նվաճելու, նվաճվածներին դիմազրկելու և տարրալուծելու հետ, այնպես էլ ձգտել է արթնացնել վտանգված ազգերի խեղված ոգին, նպաստել նրանց ինքնության հաստատմանը և ի վերջո ազատության հասնելու ուղիների հայտնագործմանը: Այսինքն ազգային գաղափարախոսությունները ունեն երկու հիմնական ուղղվածություն՝ հզոր ազգերինը հետապնդում են նվաճողական, իսկ թույլերինը՝ ինքնապաշտպանական նպատակներ[2]:

Բուրժուական հասարակական հարաբերությունների ձևավորմանը և գաղութային լայնամասշտաբ նվաճումներին զուգընթաց, իբրև նվաճողական քաղաքականության անդրանիկ ուսմունք, կյանքի կոչվեց ռասիզմը: Այն ազգերին բաժանում է ըստ կենսաբանական հատկանիշների և ձգտում է օրինականացնել նրանց մի խմբի տիրապետությունը մյուսների վրա: Այդ տեսությունը հիմնավորվում է հանրահայտ փաստերի՝ մարդկանց կենսաբանական խմբերի մարմնի կառուցվածքի մասին համեմատական անատոմիայի տվյալների քաղաքականացման ճանապարհով: Ելնելով այդ բնական փաստերից, նրանք առաջ քաշեցին ստորին և բարձրագույն ռասաների մասին տեսությունը, մարդկությանը բաժանելով տերերի և ստրուկների ռասաների: Ռասիզմը պաշտոնական գաղափարախոսություն դարձավ Գերմանիայում: Այն հանդիսացավ նացիոնալ-սոցիալիստների պրակտիկ գործունեության ծրագիրը:

Համամարդկային բարոյական սկզբունքներով ծնունդ առած ինտերնացիոնալիզմը, երբ վերանվանվեց սոցիալիստական ինտերնացիոնալիզմ և դարձավ բոլշևիկյան Ռուսաստանի պաշտոնական գաղափարախոսություն, նպատակամղվեց ծառայելու ռուսական ամբողջատիրության և գաղութային նվաճումների շահերին: «Ռուսական կոմունիզմը»,-նշում է Ն. Բերդյաևը,- նրա բնավորության երկակիության պատճառով դժվար է հասկանալ: Մի կողմից՝ նա համաշխարհային, ինտերնացիոնալ երևույթ է, մյուս կողմից՝ ռուսական և ազգային երևույթ»[3]: ...«Տեղի ունեցավ մարքսիզմի զարմանալի ձևափոխություն, այդքան ոչ ռուսական ծագմամբ և ոչ ռուսական բնավորությամբ, ձեռք է բերում ռուսական ոճ, արևելյան ոճ, որը գրեթե մոտենում է սլավոնոֆիլությանը»[4]:

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ազգերի աստիճանական մերձեցման մարքսիստական ուսմունքը վերածվեց ազգերի ծրագրավորված նվաճման և անխնա ձուլման սկզբունքի:

Պանթուրքիզմն էլ հիմնավորում էր թուրքալեզու ժողովուրդներին Օսմանյան կայսրությանը հպատակվելու և ձուլվելու անհրաժեշտությունը:

Ուշագրավ է, որ իրենց զավթողական ծրագրերն անարգել իրականացնելու և ենթակա ժողովուրդներին ուծացնելու, իրենց գաղափարախոսությունները անարգել պարտադրելու համար, մեծ տերությունները հետևողականորեն արժեզրկում ու մերժում են նվաճված ժողովուրդների ոչ միայն գոյատևելու իրավունքը, այլև գոյապահպանության գաղափարախոսությունը: Այսինքն՝ *նրանք ձգտում են գաղափարապես ևս նվաճել քաղաքականապես արդեն նվաճված ժողովուրդներին:*

Մեծագույն արհամարհանք տածելով փոքր ազգերի նկատմամբ՝ նոր օսմանական Ֆաուդ-փաշան գրում է. «Մի մեծ Գերմանիա 40 մլն. բնակչությամբ, մի Ֆրանսիա, ... մի Անգլիա, այս բոլոր ազգությունները կկարողանան իրենց զորավոր և օգտակար

---

[1] Տե՛ս Haas E., Beyond the Nation-State-Funetionalism and international organization, Stanford University press, 1964, էջ 465-466:
[2] Տե՛ս Մանուչարյան Հ., Ազգային գաղափարախոսություն, «Քաղաքագիտություն», Ե., 2006, էջ 545:
[3] Н. А. Бердяев, Истоки и смысл русского коммунизма, М., 1990, էջ 7:
[4] Նույն տեղում, էջ 116:

անհատականությունը պահպանել ժամանակի ընթացքում, բայց մի Մոնթենեգրո, մի սերբական իշխանություն, մի հայկական թագավորություն, ամենափոքր օգուտ չտալով ոչ իրենց և ոչ էլ մարդկությանը, կարող են առավել կամ նվազ ցնորական պետություններ լինել, մարդկային հին բաժանումների դժբախտ մնացորդներ, ամեն նոր աշխարհակալի որսը՝ դրանով իսկ վտանգելով աշխարհի խաղաղությունը»[1]:

Փոքր ու վտանգված ժողովուրդների ազգային գաղափարախոսությունները առավել մոլեռանդությամբ է ոչնչացնում խորհրդային դոկտրինը. «Նացիոնալիզմը գաղափարախոսություն և քաղաքականություն է,-նշվում է խորհրդային հանրագիտական բառարանում,-որը ազգային բացառիկության և ազգային գերազանցության պրոպագանդումն է: Այն սերմանում է ազգային ատելություն ինչպես տարբեր երկրների ժողովուրդների, այնպես էլ միևնույն երկրի մեջ ապրող տարբեր ազգերի և էթնոսների միջև: Ըստ միջազգային օրենսդրության՝ նացիոնալիզմը նշանակում է քաղաքական հանցագործություն և մարդու իրավունքների խախտում: Նացիոնալիզմը հասարակական-քաղաքական բարդ երևույթ է, որը ծնում է բազմաթիվ կոնֆլիկտային իրադրություններ: Նացիոնալիզմի դրսևորումները ի հայտ են գալիս պատմական հարաբերություններում, մշակույթների, տնտեսական, քաղաքական, ինչպես նաև կրոնական կենսակերպերի տարբերություններում»[2]:

Փոքրաթիվ ու վտանգված ազգերի և նրանց գաղափարախոսությունների դեմ անխնա սուր են ճոճում նաև վերազգային այնպիսի քաղաքական գաղափարախոսություններ, ինչպիսիք են կոսմոպոլիտիզմը, կոմունիզմը, գլոբալիզմը:

Կոսմոպոլիտիզմը կոչ է անում հրաժարվել հայրենասիրական զգացումներից, ցեղային ու ազգային ավանդույթներից ու արժեքներից, հանուն «մարդկային ցեղի միասնության»: Նա հիմնավորում էր գերտերությունների համաշխարհային տիրապետության հաստատման անհրաժեշտությունը, մերժում ժողովուրդների ազատության ու անկախության գաղափարը[3]:

Կոմունիզմի ուսմունքը կյանքի կոչողները համոզում էին, որ հասարակության զարգացման մի որոշակի աստիճանում լիովին կանհետանան քաղաքական ու իրավական հաստատությունները, կմահանա ազգային պետությունը, տեղի կունենա ազգերի համակողմանի մերձեցում, և ի վերջո վերացում: Հետևաբար անիմաստ էին համարում ազգերի և ազգային արժեքների պահպանմանն ուղղված ջանքերը:

Գլոբալացումը միջազգային հանրության զարգացման նոր ուսմունք է, որը նույնպես միտված է աշխարհի միատարրացման, միասնական տնտեսական քաղաքական կենտրոնների և իրավական դաշտի ստեղծմանը[4]:

Դիմակայելով այսքան ահեղ հակառակորդներին ու նրանց գերիշխանությունը հիմնավորող գաղափարախոսություններին, ի վերջո ինչ են ուզում փոքրաթիվ ու վտանգված ազգերն իրենց նացիոնալիզմով, որն այն կրողների ըմբռնումով *ազգայնականություն է*, իսկ հակառակորդների մեկնաբանությամբ՝ *ազգայնամոլություն*:

Ձին Բեթքե էլշտեյնը պնդում է, որ «...Մեր ժամանակներում առաջնային քաղաքական ուղղվածությունը նացիոնալիզմն է, և որ ինչպես միջազգային հարաբերությունների գիտակները, այնպես էլ քաղաքական տեսաբանները պետք է «նորից դպրոց գնան» և սովորեն կամ (վերասովորեն) պատմություն, աշխարհագրություն, մշակույթ, հատկապես կրոնական և ազգային համոզմունքը և ինքնությունը որոշելու կարողությունը, եթե նրանք հաջորդ (21-րդ- Հ.Մ.) դարի քաղաքականության մասին որևէ հետաքրքրական կամ ընմբռնելի միտք են ցանկանում արտահայտել»[5]:

Ազգն է բոլոր հասարակական ու քաղաքական ուժերի աղբյուրը: Սեփական ազգի նկատմամբ հավատարմությունն է, որ պետք է գերակա լինի ազգի յուրաքանչյուր

---

[1] «Արոր», Ա տարի, թիվ 6, 1910, էջ 182:
[2] Политилогия, Краткий энциклопедический словарь, М., 1997:
[3] Տե՛ս Փիլիսոփայական բառարան, Ե., 1975, էջ 218:
[4] Տե՛ս Практика глобализации: игри и правила Новой эпохи. М., 2000. с. 57.
Панарин А. С., Искушение глобализмом, М., 2003, с. 105.
[5] Միջազգային հարաբերությունների արդի տեսություն, Ե., 2001, էջ 199:

անդամի մեջ: «Ազգայնականությունը,- գրում է Անտոնի Դ. Սմիթը,- գաղափարական շարժում է՝ նպատակաուղղված ազգի ինքնիշխանության, միասնության և ինքնության պահպանմանը»[1]:

Փոքր ազգերի մեծ ընտանիքում յուրաքանչյուրի ապրելավայրից, գրված տեղից ու կարգավիճակից են կախված նրա գաղափարախոսության առանձնահատկությունները՝ ենթահամակարգերը, նրբերանգները, ուղղվածությունն ու բովանդակությունը: Ելնելով հայ ժողովրդին բաժին ընկած ու դարերով նրան ուղեկցած բարդ ճակատագրից, կարծում ենք, որ բացի ազգային գաղափարախոսությունների հիմքում դրված *ցեղի, հայրենիքի ու ազգային ինքնության* այս ընդհանրական գաղափարներից, պետք է փնտրել հայ ժողովրդին բնորոշ կենսական այլ գործոններ ևս: Մեր հետազոտության արդյունքում եկանք այն կարծիքին, որ մեզանում առանձնապես կարևորվում է ազգային միասնության՝ այսինքն *ինքնահամախմբման* և սեփական ուժերով ազատագրության, *ինքնաազատագրման* գաղափարները:

Ինքնահամախմբման բնատուր ընդունակությունից է կախված յուրաքանչյուր ազգի կենսունակությունը: Թեև ազգը մարդկային հանրույթի առավել ամուր ու ամբողջական կառույցն է, այնուամենայնիվ ազգի ներքին տրոհվածությունն առանձին դասակարգերի ու սոցիալական խմբերի դժվարացնում է ազգի լիակատար համախմբումը: Այդ բոլորին եթե ավելացնենք հայ ազգի բացառիկ տրոհվածությունը տարբեր տերությունների, համադաշնությունների, քաղաքակրթությունների և տարբեր աշխարհամասերում գտնվող գաղթավայրերի միջև, կհամոզվենք, թե ազգային միասնության ապահովումը որքան դժվարին է մեզ համար, բայց և որքան անհրաժեշտ՝ հատկապես այժմ, վերստին *արտագաղթի ճանապարհը բռնած* հայ ժողովրդին *հայրենիքում* և *գենոֆոնդը՝ սփյուռքում* ապահովելու համար: Ինքնահամախմբման կարողությունն ու բարոյական ուժն է գոտեպնդում փոքրաթիվ ժողովուրդներին գոյապահպանության համար մղված պայքարում:

«Ինչպես որ միատեղ հավաքված հարյուր կամ հիսուն տղամարդու մեջ ավելի զորություն և ուժ է լինում, քան հազարների մեջ, որոնք միմյանցից հեռու են ու անջատ, նույնպես և սովորաբար միշտ էլ ավելի հզոր է որևէ փոքրիկ ազգ կամ ցեղ, որ միաբան է, քան թե անսեր ու անմիաբան ազգը»[2], -գրում է 18-րդ դարի նշանավոր հրապարակախոս Մովսես Բաղրամյանը:

Իսկ ինքնաազատագրման գաղափարը ենթադրում է սեփական ուժերով հայրենիքի ազատագրում և անկախ ու ինքնիշխան պետականության ապահովում: Դիպուկ է ասել Գարեգին Նժդեհը, որ իր ուժերից զատ ամեն ինչի ապավինող ժողովուրդը չի կարող ունենալ անկախ հայրենիք ու ազատ ապրելու հնարավորություն: Դժբախտ է այն ժողովուրդը, որը իր դժբախտությունները վերագրել է արտաքին պատճառներին, փրկության հույսը դրել արտաքին ուժերի վրա: Մոռանում ենք, որ թշվառներին անկելանոց ու ապաստան են տալիս, և ոչ թե անկախ հայրենիք[3]:

Այսպիսով, հայոց ազգային գաղափարախոսությունը սահմանվում է որպես տեսական համակարգերի ու հայացքների մի ամբողջություն, որը ներառում է էթնիկական ընդհանրության, պատմական հայրենիքի, ազգային ինքնության, ինքնահամախմբման ու ինքնաազատագրման գաղափարների ամբողջությունը:

Հայոց ազգայնականությունը ազգային գիտակցության բարձրագույն դրսևորումն է, որը ծնվում է ազգային կեցության զարթոնքի պահին, նախապատրաստում ազգի առաջընթացի մեծ թռիչքը, այնուհետև, աննպաստ ու ճգնաժամային պահերին խամրում է, ամփոփվում ազգի ոգու ընդերքում, մինչև որ ստեղծվում են քիչ թե շատ նպաստավոր պահեր, որպեսզի նորից վերածնվի, առաջնային դառնա և իր մոգական ուժով գոտեպնդի ազգի առողջ զանգվածին և մղի նորանոր խիզախումների:

Պատմական փորձը ցույց է տալիս, որ ազգային ինքնության պոռթկումի ակնթարթներում է միայն վերելք ապրել ազգային կյանքը, հոգևոր ներուժի նկատմամբ

---

[1] Անտոնի Դ. Սմիթ, Ազգային ինքնություն, Նևադա, 1991, էջ 74:
[2] Բաղրամյան Մ., Նոր տետրակ որ կոչվում է հորդորակ, Ե., 1991, էջ 104:
[3] Տե՛ս Նժդեհ Գ., Հատընտիր, Ե., 2001, էջ 64:

հավատն ու վստահությունն է փորձության ծանր պահին կյանք տվել ազգին, գրում է մեծն Նժդեհը[1]:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայոց ինքնության առաջին մեծ պոռթկումը տեղի է ունեցել 5-րդ դարում, երբ աշխարհայեցողությունը և ազգային մտածողությունը հասել էր ազգային գաղափարաբանության հիմնադրույթների հայտնագործման և համակարգման մակարդակին[2]:

Հաջորդ զարթոնքն ի հայտ եկավ դասական միջնադարում, սկզբնավորելով արաբական լծի թոթափման նախապատրաստման պահին և ամբողջացավ Բագրատունյաց պետականության ստեղծման արդյունքում: Այն իր արտացոլումը գտավ հայոց ինքնության միջնադարյան «հանրագիտարանում»՝ էպոսում: Հաջորդ քիչ թե շատ նշանավոր թռիչքները կայացան 18-րդ դարավերջին և 19-20-րդ դարերի առանձին ակնթարթներում: Հայոց ազգային զարթոնքի նշված շրջադարձային այս հանգրվաններում ծնվեցին ռազմի դաշտում հայոց հաղթանակները կերտած հերոսները և նրանց անտես ուղեկիցները, հավատ ներշնչող, հաղթանակի ու ազատության գաղափարները կերտող հայոց հոգևոր մեծերը՝ Խորենացին, Նարեկացին, Շնորհալին, Չամչյանը, Աբովյանը, Ռաֆֆին, Թումանյանը, Ադոնցը, Նժդեհը և ուրիշներ, որոնք հայտնաբերեցին նախորդ դարերի ազգային մոռացված արժեքները, ինքնաճանաչ դարձրին հայ ժողովրդին, ոգեշնչեցին նրանց և ուղենշեցին ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու ճանապարհը և զարգացման մայրուղիները:

Հերոսական այս պատմաշրջանների միջև ընկած մռայլ ժամանակահատվածներում ծանր ու մռայլ վարագույր է իջնում հայոց հոգևոր կյանքի վրա:

* * *

Եվ ահա վերստին հայտնվել ենք մի բարդ ու հակասական ժամանակահատվածում, երբ ծավալվող հասարակական, ինչպես նաև հերոսական գործընթացները դժվար են ընկալվում և արժևորվում:

Հայտնի է, որ 1989 թ.-ից սկսեց կործանվել սոցիալիզմի համաշխարհային համակարգը: Խորհրդային միությունը հայտնվեց կառուցվածքային արմատական փոփոխությունների երկունքի մեջ: Բազմազգ պետություններում ազգայնական շարժումներն այնքան աշխուժացան, որ երկու տարվա ընթացքում 20 ազգային նոր պետություններ առաջացան: Դրանցից առաջինները թերևս Հայաստանի հանրապետությունն ու Արցախի չճանաչված հանրապետությունն էին: Հայաստանի նորանկախ հանրապետության պետական շինարարությունը ցավալիորեն սկսվեց ոչ միայն ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի ծանր պահին, այլև Սպիտակի երկրաշարժից կրած անդառնալի կորուստների, լիակատար շրջափակման, էներգետիկ ճգնաժամի, Ադրբեջանից փախած հազարավոր հայերի օրհասական դրության պայմաններում:

Նախընթաց հասարակարգում տիրող դասակարգային ու կուսակցական քաղաքականությանն ու գաղափարախոսությանը փոխարինեցին ազգային ու տարածաշրջանային մարտահրավերներն ու գաղափարախոսությունները: Հասարակական-քաղաքական ու տնտեսական նոր պահանջներին համապատասխան՝ անկախության ուղին բռնած երկրներում որոշվեց անցում կատարել դեպի շուկայական հարաբերություններ:

Ակնհայտորեն գոյություն ունեցող բարդ ու իրարամերժ այս զարգացումները գիտականորեն բացատրելու անհրաժեշտությունը, այս բարդ փոխակերպումների շարունակականության պայմաններում դրանց գիտական իմաստավորման և լուծման ուղիների մշակման փորձերը կապվում են մեծ դժվարությունների ու ռիսկի հետ:

Ակնհայտ են քաղաքական, տնտեսական, բարոյական, հոգեբանական, այսինքն՝ համընդհանուր ճգնաժամի դրսևորումներն ու հետևանքները: Հայ հասարակությունն այսօր կարիք ունի վճռական վերափոխումների, ոգևորիչ ծրագրերի ու գաղափարների,

[1] Նժդեհ Գ., նշվ. աշխ., էջ 245:
[2] Տե՛ս Մանուչարյան Հ., Հայ քաղաքական մտքի պատմություն, Ե., 2013, էջ 87-97:

և հատկապես կորցրած հավատի վերականգնմանը նպաստող համոզիչ գաղափարախոսության:

Սակայն ծայր առած համընդհանուր ճգնաժամը դարձավ ոչ միայն աղքատության պարտադրված վիճակ, այլև «ազգային չգիտակցված կեցություն»[1], որի արդյունքում մերժվում էր ոչ միայն ազգային ինքնությունը, ապրելու հույսն ու ապագայի նկատմամբ հավատը, այլև ազգային արժանապատիվ ապրելու անհրաժեշտությունը քարոզող գաղափարախոսությունը: Կյանքի կոչվեց «Ազգային գաղափարախոսությունը կեղծ կատեգորիա է» սկզբունքը: «Կեղծ քաղաքական կատեգորիա է նաև «Ազգային գաղափարախոսություն» հասկացությունը,- հռչակում է Հայաստանի հանրապետության առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը,- որովհետև ժողովրդավարության պայմաններում անհնար է ողջ ազգին համախմբել մեկ միասնական գաղափարախոսության շուրջ»[2]:

Լ. Խուրշուդյանը այս վերաբերմունքը՝ հայոց ազգային արժեքների դեմ կատարվող մերժողական վերաբերմունքը որակում է որպես Հայաստանի հանրապետության պետական քաղաքականություն[3]:

Ազգի ապագայի նկատմամբ հավատի կորուստը, սոցիալական անզորությունը առաջացնում է տագնապի տրամադրություն, պարտվողականություն և թերարժեքության բազում բարդույթներ:

«Գիտական հոգեբանությունը» վաղուց է ապացուցել,- նշում է Գ. Նժդեհը,- որ աղետներ տեսած, արհավիքների ցնցումների ենթարկված ժողովուրդները սկսում են տառապել հոգեկան ետընթացով: ... Նախ և առաջ նրան պատում է թերարժեքության տանջալից զգացումը, որի պատճառով դառնում է քաղաքական հոռետես»[4]: Այս բարդույթը զանգվածային դարձավ հետխորհրդային Հայաստանում: Եվ այս ամենի արդյունքում, վերստին ծայր առավ ամենակործանարարը՝ *զանգվածային պանդխտությունը*՝ հայ ժողովրդի գլխին կախված հավերժական չարիքը: Այդ արհավիքի թողնելիք հետևանքների մասին պատկերացում կազմելու համար թռուցիկ ակնարկով հիշենք զանգվածային արտագաղթի երկու նախադեպ՝ Բագրատունյաց պետության անկման և հայոց մեծ եղեռնին հաջորդած արտագաղթերն ու նրանց թողած կործանարար հետևանքները:

Բագրատունյաց թագավորության /885-1045 թթ./ վերջին տասնամյակներում արևելքում ակտիվանում է բյուզանդական կայսրությունը և հայ ժողովրդի դիմադրական ուժերը մեկնդմիշտ ջլատելու նպատակով հայ վերնախավի որոշ ներկայացուցիչների աջակցությամբ /Վեստ Սարգիս, Պետրոս Գետադարձ և այլն/ հեռացնում էին հայ ազնվականությանն ու նրանց զինված ուժերին և վերաբնակեցնում կայսրության տարածքներում:

Հունական այս անխոհեմ քաղաքականությանը հաջորդում են սելջուկյան արշավանքները: Պատմական Հայաստանի մեծ մասը, իսկ հետագայում բյուզանդական կայսրության ողջ տարածքը լցվեցին թուրքական քոչվոր հորդաներով:

Հույների թույլ տված այս սխալը հետագայում կրկնեցին հենց իրենք՝ թուրքերը: Դեռևս 16-րդ դ. սկզբներից, պարսիկների դեմ պատվար ստեղծելու նպատակով նրանք Արևմտյան Հայաստանը բնակեցրին քրդական ցեղերով: Այնուհետև կյանքի կոչեցին քրդերի ձեռքերով հայ ժողովրդին հայրենիքից դուրս վտարելու և ոչնչացնելու ծրագիրը: Արևմտյան Հայաստանը վերստին հայաթափվեց, քրդերը այնտեղ ձեռք բերեցին գերիշխող դիրք, որի արդյունքում Թուքիան այսօր կանգնած է բազմամիլիոնանոց քրդական զանգվածի դեմ-հանդիման:

Ինչ տվեց բյուզանդական կայսրությանը Հայաստանի հայաթափումը. Հայաստանին տեր դարձան թուրքական հորդաները, որոնք շուտով նվաճեցին նաև բյուզանդական կայսրությունը: Ինչ տվեց Հայաստանը հայաթափելու թուրքական ծրա-

---

[1] Տե՛ս Սարինյան Ս., նշվ. աշխ., էջ 281:
[2] «Հայաստանի հանրապետություն», 26 ապրիլի, 1994:
[3] Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Ե., 1999, էջ 233:
[4] Գ. Նժդեհ, Երկեր, 1995, էջ 74:

գիրը. Հայաստանին տեր դարձան քոչվոր քրդերը: Հայ ժողովուրդը կորցրեց իր մեծ հայրենիքը, պետականությունը, ազգային միասնությունը, ծվարեց նրա մի փոքր հատվածում, սակայն ձեռք բերեց մեծ սփյուռք: Պատմության այս ահեղ իրողություններից ինչ դասեր պետք է քաղեն իրեն բյուզանդական կայսրության իրավահաջորդ հռչակած ռուսական կայսրությունը և նորօրյա «Պետրոս Գետադարձներն» ու «Վեստ Սարգիսները»:

Այժմ հայ ժողովրդի առաջ ծառացած ամենակարևոր հարցերից առաջինն այն է, թե ինչի կհանգեցնի հայ ժողովրդի *մերօրյա զանգվածային արտագաղթը* և երկրորդ՝ *ինչ ընթացք ու ապագա կունենա հայկական սփյուռքը:*

Հայտնի է, որ միջնադարյան կյանքի դանդաղ և միապաղաղ պահպանողական իրավիճակը, գաղթօջախների ներփակ դրությունը գաղթաշխարհում հայոց ազգային նկարագիրը և ավանդույթները պահելու համար բարենպաստ պայմաններ էին ստեղծում, այնքան բարենպաստ, որ Կիլիկիայում նույնիսկ ստեղծվեց հայկական պետականություն, որը գոյատևեց 300 տարի և արարեց ոչ միայն համազգային, այլև համամարդկային մեծ արժեքներ: Աշխարհասփյուռ հայ գաղթավայրերը դարեր շարունակ հայ ժողովրդի կեցությունն ու պատմությունը ամբողջացնող ու նաև նրա առանձնահատկությունները պայմանավորող կարևորագույն գործոն դարձան:

Տարբեր երկրներում ու տարբեր դարաշրջաններում ծաղկում ապրող գաղթօջախները դարձան հայկական մշակույթի, գիտության ու կրթության կենտրոններ: Հայ առաջավոր զանգվածները, շփվելով հյուրընկալող ժողովուրդների հետ, հաղորդակցվելով մշակույթի համաշխարհային ձեռքբերումներին, ստեղծեցին համազգային մշակույթի այնպիսի արժեքներ ինչպիսիք են հայկական առաջին տպագիր գիրքը, պարբերականը, քաղաքական քարտեզը, Հայաստանի ազգային-ազատագրական պայքարի ծրագրերը և այլն[1]:

Սակայն, արդյունաբերական հասարակարգի ձևավորմանը զուգընթաց, հյուրընկալող երկրներում հասարակական կյանքը համակարգվում է բոլորի համար ընդհանուր սկզբունքներով: Գաղութները արագորեն կորցնում են ինքնամփոփ կյանքի պայմանները: Ինտեգրվելով հյուրընկալող ժողովուրդներին՝ սփյուռքահայերը կորցնում են ազգային ինքնության այնպիսի արմատական բաղադրիչներ, ինչպիսիք են ցեղի, հայրենիքի, լեզվի, մշակույթի, հոգեկան կերտվածքի էթնոտարբերիչ հատկանիշները: Ազգային այս գլխավոր հատկանիշների կորստից հետո նրանց ազգային պատկանելության ապագան դառնում է մշուշապատ: Այսօր սփյուռքահայ համայնքներ գոյություն ունեն աշխարհի ավելի քան հիսուն երկրներում, սակայն սփյուռքահայերի հիմնական մասը բնակվում է Ռուսաստանի դաշնությունում և ԱՄՆ-ում[2]: Գերտերություններ են սրանք, որոնց դիրքորոշումներից է կախված Հայաստանի կարգավիճակը:

Ռուսաստանի դաշնության հայկական գաղթօջախները հայ-ռուսական հարաբերությունների և այն մարմնավորող ազգային ծրագրերի ու գաղափարախոսությունների համակարգում առավել կարևոր խնդիրներ ևս ունեն: Հայերի թիվը Ռուսաստանում հասնում է 3 մլն.-ի: Այսինքն ՌԴ-ն հայկական այն գաղթավայրն է, որտեղ գրեթե Հայաստանից շատ հայեր են ապրում, և որի բազմակողմանի ազդեցությունը Հայաստանի և հայերի նկատմամբ անմիջական է: Միևնույն պետության մեջ և քաղաքակրթական միջավայրում համերաշխ ապրելու գործոնը մեծ դեր է խաղացել հայ-ռուսական բարեկամական հարաբերությունների համակարգում: Հայերի մեծամասնությունը արտաքին ցանկացած հարաբերություններում նախապատվությունը տալիս է Ռուսաստանին, ինչն առաջին հերթին պայմանավորված է տնտեսական, մշակութային և քաղաքական գործոններով: Ռուսաստանը բացարձակ առաջատարն է այն երկրների

[1] Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. 4, Ե., 1972, էջ 298:
[2] Տե՛ս «Հայ սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 9:

ցանկում, որտեղից ֆիզիկական անձինք բազմամիլիոնանոց տրանսֆերներ են ուղարկում Հայաստան երկրի բանկային համակարգի միջոցով[1]:

Ռուսաստանը հսկայական հանրային կապիտալ ունի Հայաստանում, հայերն էլ իրենց հերթին՝ Ռուսաստանում: Այս փոխկապակցվածությունը չի կարող չպայմանավորել Հայաստանում ստեղծված իրատեսական քաղաքականությունը[2]:

Հայ ժողովրդի ընկալմամբ՝ իրենց և ռուսների միջև սոցիալական տարածությունը ամենամոտն է: Այսուհանդերձ, Ռուսաստանի Դաշնության հայկական գաղթօջախների ապագան նույնպես մշուշապատ է: Ռուսաստանում ավելի սուր է դրված ազգային ինքնության պահպանման հարցը: Կորցնելով լեզուն, կենցաղային մեծ շփումների և խառն ամուսնությունների հետևանքով, հայերը արագորեն կորցնում են նաև ազգային բնավորությունն ու հոգեբանությունը:

Հարկ է նշել, որ այս իրավիճակում վտանգված է նաև հայ և ռուս ժողովուրդների ռազմավարական համագործակցության ապագան: Նկատի ունենք հայ և ռուս ժողովուրդների դեմ ուղղված պանթուրքիզմի գաղափարախոսության վտանգը:

Պանթյուրքականները հանդես էին գալիս թյուրքալեզու ժողովուրդներով բնակեցված 4 մլն. քկմ տարածքի Թուրքիայի գլխավորությամբ միավորման պահանջով: «Փոքր Թուրանի» սահմանները «իրատես» պանթյուրքականները տարածում էին Կ. Պոլսից մինչև Բայկալ լիճ և Մոնղոլիայից մինչև Կազան[3]:

Պանթյուրքիզմի նիզակը ուղղված է առաջին հերթին Ռուսաստանի դեմ, որի կազմում է ապրում թյուրքալեզու ժողովուրդների մեծ մասը, երկրորդը՝ հայ ժողովրդի դեմ Թուրքիայում և Կովկասում: Հայտնի է, որ 1921 թ. Լենինի և Քեմալի հայադավ գործարքի արդյունքում Ադրբեջանին հանձնվեցին Նախիջևանը և Ղարաբաղը, որի արդյունքում Օսմանյան Թուքիան Ադրբեջանից բաժանում էր Զանգեզուրի ընդամենը 20-25 կմ-անոց նեղլիկ շերտը, որով Ռուսաստանի և Հայաստանի դեմ ուղղված պանթուրքիզմի գաղափարախոսությունը գրեթե իրականություն դարձավ:

Արդի գերբարդ պատմաշրջանում հայաթափվում է Հայաստանը, *բացվում են Հարավի դռները*, ասպարեզ են մտնում հին մերժված, բայց նոր նկրտումներ ունեցող ուժերը: Հայաստանը հայ ժողովրդի համար դառնում է ապրելու ամենաանպաստ երկիրը:

Այս պայմաններում հայոց ազգային գաղափարախոսության առջև պատմականորեն ծառացած խնդիրներին՝ ցեղի, հայրենիքի, ազգային ինքնության, ինքնահամախմբման ու ինքնաազատագրման հիմնադրույթներին ավելանում է *հայրենիքը ստեղծված ճգնաժամից դուրս բերելու և հայաթափումից փրկելու, զանգվածային ներգաղթ կազմակերպելու, իսկ սփյուռքը ուծացումից փրկելու հավատ ներշնչող ազգային գաղափարախոսության մշակման անհետաձգելի անհրաժեշտությունը:* Ինքնահամախմբման, արտագաղթի կանխման, հայրենիքի հզորացման, սփյուռքը ուծացումից փրկման, ներգաղթի կազմակերպման գաղափարներն են ընկած ազգային քաղաքականության գործնական ծրագրի հիմքում:

Ինչպես տեսնում ենք հայոց ազգային գաղափարախոսությունն ունի իր հստակ նպատակը: Եվ ցանկալի է, որ նա ունենա նաև իր անունը, անուն, որը ընկալելի, ցանկալի ու նվիրական լինի յուրաքանչյուր հայի համար: Այս ուղղությամբ փորձեր են արվել, առաջադրվել են ցեղակրոնության և տարոնականության գաղափարները: Երկուսն էլ նվիրական են, սակայն նրանք առաջադրվել են կոնկրետ ժամանակի և կոնկրետ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Կարծում ենք, որ հայոց ազգային գաղափարախոսության նոր պահանջներից բխող անունը պետք է խորհրդանշի Հայաստանի և աշխարհասփյուռ հայության մերօրյա պահանջներից բխող գաղափարները: Մեզ հայտնի ազգային գաղափարախոսությունները, ինչպես տեսանք վերևում, կրում են ցեղի կամ հայրենիքի խորհրդանիշը, բնականաբար հայոց ազգային գաղափարախոսության անվանման մեջ պետք է արտացոլվի ցեղի, կամ հայրենիքի գաղափարը:

---

[1] Տե՛ս ՀՀ ԿԲ, 2006-ից-2012 թթ., Տեղեկագիր, www. cba.am

[2] Տե՛ս Գրիգորյան Գ., Ռուսաստանը Հայաստանի հանրային ընկալմամբ, «Գլոբուս», Ե., 2013, թիվ 5, էջ 52:

[3] Սիմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարախոսությունը և քաղաքականությունը, Ե., 1986, էջ 250:

Հայ ժողովրդի ոգու մեջ վեր է խոյանում հայոց լեռնաշխարհը «Անմար թելերով է կապված իր գետին, իր Վոլգային ռուսական ոգին,- գրում է Գ. Նժդեհը,- ծովի, ծովեզերքի ծնունդն է յոյնը: Անապատն է կաղապարել արաբի էությունը: Իսկ հայ էությունը մշակելու գործում առյուծի բաժինը ընկնում է հայոց լեռներին: Մասիսն է դայակը հայ ոգու»[1]:

Արարատի բիբլիական պաշտամունքը, աշխարհասփյուռ հայությանը Արարատ լեռան շուրջ համախմբելու գերագույն նպատակը թելադրում է հայոց ազգային գաղափարախոսության անունը կապել Արարատի հետ, անվանել այն ***Արարատիզմ-Արարատականություն:***

Հայոց ազգային գաղափարախոսության առաջարկված այս համակարգը հայ ժողովուրդի իղձերի իրականացման ծրագիրն է, որի նպատակն է աշխարհի հայության հայացքը սևեռել դեպի իր սրբազան սարը, տեսնել նրան Արարատի շուրջ բոլորը, համահավաք, հզոր ու ինքնիշխան: Ու որպես այս նվիրական նպատակների վերջաբան ուզում ենք Արարատին նվիրված հազարավոր ստեղծագործություններից մեջ բերել հայ մեծ վիպասան Ռաֆֆու հետևյալ քառատողը.

Արդյո՞ք գալու է մի օր, ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ,
Եվ ամեն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմել դեպ յուրյանց սիրուն Հայրենիք:

Այսպիսով՝ *Հայոց ազգային գաղափարախոսությունը սահմանվում է որպես տեսական համակարգերի ու հայացքների այն ամբողջությունը, որը ներառում է էթնիկական ընդհանրության, պատմական հայրենիքի, ազգային ինքնության, ինքնահամախմբման ու ինքնաազատագրման գաղափարների ամբողջությունը:*

Հայոց ազգային գաղափարախոսության առջև ծառացած խնդիրներին այժմ ավելացել է *հայրենիքը ստեղծված ճգնաժամից դուրս բերելու և հայաթափումից փրկելու, զանգվածային ներգաղթ կազմակերպելու, իսկ սփյուռքը ուծացումից փրկելու հավատ ներշնչող ազգային գաղափարախոսության կյանքի կոչման անհրաժեշտությունը: Գաղափարախոսության այս համակարգը անվանում ենք Արարատականություն:*

Гензель Манучарян, Феномен Армянской национальной идеологии,-Армянская национальная идеология определяется как целостность теоретических систем и взглядов, включающая этническую общность, целостность идей исторической родины, национальной идентичности, самоорганизации и самоосвобождения.

К проблемам, возникшим перед армянской национальной идеологией, прибавилась необходимость выведения родины из создавшегося кризиса и спасения армян от выселения, организации массовой иммиграции и спасения диаспоры от отчужденности путем претворения в жизнь внушающую доверие национальную идеологию. Данную систему идеологии назовем Араратизмом.

Henzel Manucharyan, The Phenomen of Armenian National Ideology,-The Armenian national ideology is defined as the integrity of theoretical systems and views, including the ethnic community, the integrity of the ideas of the historical homeland, national identity, self-organization and self-liberation.

To the problems that arose before the Armenian national ideology, ise added the need to take the homeland out of the crisis and save the Armenians from eviction, organize mass immigration, and save the Diaspora from alienation by implementing the national ideology that inspires confidence. This system of ideology will be called Araratianity.

[1] Նժդեհ Գ., Հատընտիր, Ե., 2001, էջ 245: